Թոնի Ալամոյի Քրիստոնեական Եկեղեցի

Համաշխարհային Լրատու




Նոր Երուսաղեմ

Ամբողջ աշխարհով տարածված եկեղեցիներ

Քահանա Թոնի Ալամո | Ալամոյի Քրիստոնյա Ժողովուրդ | Ծավալ *17800*


# ԿՐՈՆԻ ԵՎ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

**Հեղինակ՝ Թոնի Ալամո**



*Թոնի և Սյուզան Ալամոները նվագախումբը և երգչախումբը հեռուստահաղորդման ժամանակ 1970-ականներին և վաղ 80-ականներին:*

Այս աշխարհում կան ավելի շատ կրոնական մարդիկ, քան մարդիկ, որոնք փրկված են, ՀՈԳՈՒՑ վերածնված: Աստվածաշունչը տարբեր ձևերով մեզ ասում է, որ կրոնը սատանայից է գալիս, իսկ փրկությունը՝ ԱՍՏԾՈՒՑ է:[1]

ՔՐԻՍՏՈՍԻՆ հավատալու և կրոնին հավատալու տարբերությունն այն է, որ ՔՐԻՍՏՈՍԻՆ հավատալը նշանակում է, որ ԱՍՏՎԱԾ է փնտրում մարդուն: Այլ կերպ ասած, այդ ԱՍՏՎԱԾ է փնտրել մարդուն ու դեռևս փնտրում է: Ըստ Հին Կտակարանի՝ ԱՍՏՎԱԾ սկզբից հաղորդակցվեց Ադամի, Կայենի, Սեթի, Ենքոի, Նոյի, Աբրահամի, Իսահակի և Յակոբի հետ: Նոր Կտակարանում, ՆԱ սկզբից հաղորդակցվեց Մատթէոսի, Յովհաննէսի և Պողոս Առաքյալի հետ: 1964 թ.-ին ՆԱ հաղորդակցվեց ինձ հետ և շատ այլ մարդկանց հետ Աստվածաշնչյան ժամանակների և ներկա ժամանակների միջև: Այլ կերպ ասած, ԱՍՏՎԱԾ փնտրել է բոլոր խոյերին, ԻՐ ընտանիքի առաջնորդներին, ուղարկելով նրանց փնտրել ոչխարներին, որոնք ապագայում կլինեն վերջին փրկվածները, որոնք հավերժություն կանցկացնեն Դրախտի Թագավորությունում ՀԱՅՐ ԱՍՏԾՈ, ՆՐԱ միածին ՈՐԴՈՒ՝ ՔՐԻՍՏՈՍԻ և ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ հետ միասին: ՔՐԻՍՏՈՍԸ հրահանգում է ԻՐ աշակերտներին, մեզ, բոլորիս գտնելուրիշներին, որպեսզի նրանք էլ դառնան ԻՐ աշակերտները և որպեսզի նրանք էլ անեն նույնը:[2] Նա սա անում է Մատթէոսի գրքի 28:19-21-ում հետևյալ խոսքերով. «Ինձ է տրուած ամէն իշխանութիւն երկնքում եւ երկրի վրայ. ինչպէս Հայրը ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացէ՛ք ուրեմն աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք [ամբողջովին ընկղմվելով ջրի մեջ[3]] ՀՕՐ եւ ՈՐԴՈՒ եւ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ անունով: Ուսուցանեցէ՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատուիրեցի: Եւ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչեւ աշխարհի վախճանը: Ամեն»:

ՔՐԻՍՏՈՍՆ է փնտրում մարդուն, ոչ թե մարդը ԱՍՏԾՈՒՆ: Երբ մարդն է փնտրում ԱՍՏԾՈՒՆ, դա «կրոն է», իսկ երբ ԱՍՏՎԱԾ է փնտրում մարդուն, դա «փրկություն է»:

Բոլոր կրոնները պահանջում են, որ չփրկված մարդիկ փնտրեն ԱՍՏԾՈՒՆ կամ նրան, ում ԱՍՏՎԱԾ են համարում: Ի՞նչ է կրոնը առհասարակ: Կրոնը մարդու հավատքն ու հարգանքն է որևէ բանի նկատմամբ, ինչը նրանք համարում են ԱՍՏՎԱԾ: Մարդու գիտակցությունն է դրդում մտածել, որ որևէ տեսակի աստված գոյություն ունի, բայց նրանք գաղափար անգամ չունեն միակ իրական ԱՍՏԾՈ մասին: Ահա թե ինչու ՀԻՍՈՒՍԸ Մատթէոսի գրքի 28:19-ում ասաց ԻՐ աշակերտներին այն ժամանակ և բոլոր ԻՐ աշակերտներին մինչև այսօր. «Գնացէ՛ք ուրեմն ԱՇԱԿԵՐՏ ԴԱՐՁՐԷ՛Ք ԲՈԼՈՐ ԱԶԳԵՐԻՆ [թե ով է իրական ԱՍՏՎԱԾԸ, որին պետք է երկրպագեն, և միայն երկրպագեն ու ծառայեն ՆՐԱՆ] մկրտելով նրանց [ամբողջովին ընկղմելով ջրի մեջ] ՀՕՐ եւ ՈՐԴՈՒ եւ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ անունով»:

Դրախտ ընկնելու համար, մենք պետք է կատարյալ լինենք:[4] Մենք պետք է կատարյալ լինենք, քանի որ ԱՍՏՎԱԾ է մեզ պատվիրում կատարյալ լինել, իսկ ԱՍՏՎԱԾ երբեք չի պատվիրում մեզ անել մի բան, ինչն անհնարին է:[5] Մատթէոսի գրքի 5:48-ում ՀԻՍՈՒՍԸ

*(Շարունակությունը էջ 2-ում)*

---

**1** Եսայի 1:11-16, 29:13-14, Երեմիա 7:8-11, 23:33-40, Եզեկիէլ 13:1-23, Միքիա 3:11, Մատթէոս 6:5, 7-8, 7:21-23, 15:7-9, 21:28-32, 23:1-37, Ղուկաս 6:46, 18:10-14, Յովհաննէս 5:40, 6:35-58, 10:1-15, 14:6, 15:2, Տիմոթէոսին Բ 3:1-7, Տիտոսին 1:16, Յակոբոս 2:19 **2** Դանիէլ 12:3, Մատթէոս 10:7-8, 28:19-20, Ղուկաս 24:46-48, Գործք 1:8, 2:38-41, 10:39-43, Հռոմեացիներին 7:4, 10:13-15, Կորնթացիներին Ա 1:17-18, 21, 9:16-17, Եփեսացիներին 3:2-10, Կողոսացիներին 1:25-29, Տիմոթէոսին Բ 4:2, 5 **3** Մատթէոս 28:19, Հռոմեացիներին 6:3-5, Կողոսացիներին 2:10-12 **4** Երկրորդ Օրէնք 18:13, Թագաւորութիւններ Ա 8:61, Սաղմոս 119:1-3, Մատթէոս 5:48, Կորնթացիներին Բ 13:11, Եփեսացիներին 4:11-13, 5:25-27, Փիլիմոնին 3:12-15, Կողոսացիներին 1:21-22, Տիմոթէոսին Ա 6:14, Տիմոթէոսին Բ 3:16-17, Յակոբոս 1:4, Յովհաննէս Ա 3:6-10, Յայտնութիւն 21:7, 27 **5** Ծննդոց 17:1, Ղեւտական 11:44-45, 19:2, 20:26, Երկրորդ Օրէնք 18:13, Թագաւորութիւններ Ա 8:61, Սաղմոս 15:1-5, 24:3-5, 119:1-3, Յովհաննէս 17:17-23, Հռոմեացիներին 6:4-14, 8:1-14, 37, Կորնթացիներին Բ 6:14-17, 13:11, Գաղատացիներին 5:16, Եփեսացիներին 4:11-13, 5:25-27, 6:10-18, Փիլիմոնին 1:9-11, 2:12-15, 3:12-14, 4:13, Կողոսացիներին 1:10-11, 21-22, Թեսաղոնիկեցիներին Ա 4:6-7, Տիմոթէոսին Ա 6:11-14, Տիմոթէոսին Բ 3:16-17, Եբրայեցիներին 2:18, 12:14, 13:20-21, Յակոբոս 1:4, 27, Պետրոս Ա 1:15-16, 5:8-10, Յովհաննէս Ա 2:14, 3:5-10, 4:4, Յայտնութիւն 3:1-5, 7:13-15

## ԿՐՈՆԻ ԵՎ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

*(Շարունակությունը էջ 1-ի)*

ասաց. «Արդ, կատարեա՛լ եղէք դուք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրն է կատարեալ»: Եթե մենք քայլում ենք ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ, ապա կատարյալ ենք: Հռոմեացիների գրքի 8:1-2-ում ասված է. «Եթէ այդպէս է, այլեւս ոչ մի դատապարտութիւն չկայ [ոչ Դժոխք, ոչ Հրածին Լիճ] նրանց համար, որոնք ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍԻ մէջ են. որովհետեւ Քրիստոս ՅԻՍՈՒՍՈՎ կեանք տուող հոգու օրէնքը ինձ փրկեց մեղքի եւ մահուան օրէնքից»: Ուշադրություն դարձրեք, որ այս սուրբ գրությունը չի ասում, որ մենք ազատվում ենք բարոյական օրենքից: Մենք կարող ենք ազատ լինել միայն մեղքի և մահվան օրենքից: Մեղքի և մահվան օրենքն ասում է, որ եթե մենք խախտենք բարոյական օրենքները մեր ՀՈԳՈՒՑ վերածնվելուց հետո, ապա չի մնա այլևս ոչ մի զոհաբերություն (ներում) մեղքերի համար:

Եբրայեցիներին գրքի 10:26-31-ում ասված է. «Քանզի եթէ կամաւոր կերպով ենք մեղանչում ճշմարտութիւնն իմանալուց եւ ընդունելուց յետոյ, ուրեմն մեղքերի քաւութեան համար այլեւս ուրիշ զոհ չի մնում. այլ մնում է դատաստանի ահեղ սպասումը եւ կրակի կատաղութիւնը, որ լափելու է Աստծու հակառակորդներին [ԱՍՏԾՈ թշնամիներին]: Մովսէսի օրէնքը արհամարհած մէկին անողորմաբար սպանում էին երկու կամ երեք մարդու վկայութեամբ: Իսկ որչա՛փ աւելի խիստ պատժի արժանի պիտի համարէք նրան, ով ոտնահարել է ԱՍՏԾՈ ՈՐԴՈՒՆ եւ անմաքուր համարել նոր ուխտի արիւնը, որով մաքրուել է ինքը եւ անարգել շնորհի ՀՈԳԻՆ: Արդարեւ, ճանաչում ենք նրան, ով ասաց. «ԻՄՆ են վրէժխնդրութիւնները, եւ ԵՍ պիտի հատուցեմ», - ասում է ՏԵՐԸ: Եւ դարձեալ. ՏԵՐԸ պիտի դատի ԻՐ ժողովրդին. Ահաւոր է ընկնել կենդանի ԱՍՏԾՈՒ ձեռքը»: Սա է պատճառը, որ ԱՍՏԾՈ նկատմամբ վախն իմաստության սկիզբն է:[6] Մենք պետք է անենք այն, ինչը ՆԱ պատվիրում է մեզ, որպեսզի հեռու մնանք մնացած կրոններից և ՀՈԳՈՒՑ վերածնվենք: Սա նշանակում է գիտակցել, թե ինչ է ՆԱ ուզում մեզանից և ԱՍՏԾՈ նկատմամբ վախն է գիտակցումը:

Յովհաննէսի գրքի 3:5-ում ՀԻՍՈՒՍՆ ասում է Նիկոդեմոսին, որ նա ՊԵՏՔ Է վերածնվի ՀՈԳՈՒՑ: ՀԻՍՈՒՍԸ երբեք չի ասել, որ դու ՊԵՏՔ Է միանաս որևէ կրոնի: ՔՐԻՍՏՈՍԻՆ հավատալը բոլորովին նման չէ որևէ կրոնի: Կրկին, ՔՐԻՍՏՈՍԻՆ հավատալը նշանակում է, որ ԱՍՏՎԱԾ է գալիս մարդուն փնտրելու ցանկանալով, որ մարդը ԻՐԵՆ ծառայի:

Մարդիկ հաճախ ասում են. «Ո՞րն է Քրիստոնեության և կրոնի տարբերությունը»: Նրանք կարող են հարցնել. «Քրիստոնեությունը կրոն չէ՞»: Այս հարցին ազնիվ պատասխանելով, ես կասեմ, որ Քրիստոնեությունը կրոն չէ: Քրիստոնեությունը փրկություն է: Չնայած նրան, որ հոգևոր առումով անգրագետները համարում են Քրիստոնեությունը աշխարհի հինգ հիմնական կրոններից մեկը, սակայն փաստն այն է, որ ՔՐԻՍՏՈՍԻՆ հավատալը չի նշանակում հավատալ կրոնի: Մենք սա կարող ենք նաև բացատրել, ասելով, որ նրանք, ովքեր իսկապես հավատում են ՔՐԻՍՏՈՍԻՆ Քրիստոնյաներ են, այլ ոչ թե այսպես կոչված «քրիստոնեական» կրոնի հետևորդներ: Կրոնները մինչև մեր օրերը պատմականորեն դաժանաբար դեմ են եղել Քրիստոնեությանը:

Հռոմեական կաթոլիկ եկեղեցին սպանել է միլիոնավոր մարդկանց երեք տարբեր ինկվիզիցիաների ժամանակ: Նրանք նաև շատ այլ սպանություններ են իրագործել անցյալ երկու հազար տարիների ընթացքում, ինչպես Ուեյքոյի կոտորածը [հիմնական Քրիստոնեական եկեղեցի Ուեյքոյում, Տեխաս նահանգ], որտեղ շատ երեխաներ իրենց մայրերի և հայրերի հետ միասին սպանվեցին: Այսպիսի գործողությունները շարունակաբար իրականացվում են Հռոմեական կաթոլիկ եկեղեցու կողմից մինչ օրս:

Մենք կարող ենք ետ հայացք գցել Իսպանական ինկվիզիցիայի վրա, ինչպես նաև շատ այլ վայրագությունների վրա, որոնք իրականացրել է Վատիկանը: Ներառյալ վեց միլիոն հրեաների սպանությունը Աուստեռլիցում և այլ Նացիստական համակենտրոնացման ճամբարներում: Ներկայիս պատերազմը Քրիստոնեության դեմ գալիս է Վատիկանից:[7] Մեզանից շատերին զրկել են հարյուրավոր միլիոն դոլարների սեփականությունից, և մեզանից շատերը, ովքեր իսկական վերածնված Քրիստոնյաներ են, ցմահ ազատազրկման են դատապարտվում բանտերում սուտ մեղադրանքներով Կաթոլիկ կրոնի պատճառով: Ես չեմ խոսում այն հին փոքր Կաթոլիկ մայրերի և հայրերի մասին, որոնք Հռոմեական կաթոլիկ եկեղեցիներն են այցելում: Նրանք այնքան անտեղյակ են այս փաստերի մասին, որքան որ աշխարհի մնացած բնակչությունը: Այնուամենայնիվ, ես ճշմարտությունն եմ ասում:

---

6 Յոբ 28:28, Սաղմոս 111:10, Առակներ 1:7, 9:10, 15:33

7 Դանիէլ 7:7, 19-27, Յայտնութիւն 13:1-7, 17:1-18 8 Երեմիա 4:16, Դանիէլ գլ. 4, Մատթէոս 13:24-30, 36-43, 47-50, 24:29-31, Ղուկաս 15:4-10, Կորնթացիներին Ա 11:10, Տիմոթէոսին Ա 5:21, Յայտնութիւն 14:13-20

## Միացյալ Թագավորություն

Երբ եղբայր Թոնին խոսում է, Վատիկանը սկսում է դողալ: Դուք ստիպում եք սատանային փախչել, եղբայր Թոնի, Հիսուսի անունով, Ամեն:
Ջոնաթան Բէյլի
Նյու Քասլ, Միացյալ Թագավորություն

## Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն

*(Թարգմանված է ֆրանսերենից)*

Մենք համարում ենք, որ ընդունված ենք ձեր եկեղեցու կողմից:

Քաջություն է պետք դիրքորոշում ունենալու համար: Այս գրականության միջոցով ես պարզում եմ, որ դուք Քրիստոսի զինվորն եք եղնելով նրանից, թե ինչպես եք ներկայացնում այս հակաքրիստոսին ոստիկանապետական կառավարությանը: Սա ապացուցում է, որ դուք քաջ եք: Մի փոքր քաջություն և դուք հաղթող եք և զիտեք դա:

Գրականության նվիրատվությունը մեր կողմից ողջունելի է: Շնորհավորում ենք բոլոր քրիստոնյաների և Ալամոյի եկեղեցիների Սուրբ Զատիկը:
Զիգաշանե Մառոյի Իսրայել
Սդւտ-Կիվույի նահանգ, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն

Մինչ Լեհաստանում Կաթոլիկ և Լութերական դողանջներն էին հնչում, միլիոնավոր անմեղ մարդիկ սպանվում էին գերմանական գազի խցիկներում և վառարաններում, ապա մեռնելուց հետո, նրանց բուլդոզերով լցնում էին մեծ փոսերի մեջ և ոչնչացնում (զանգվածային գերեզմանոցներում): Նրանցից ոմանք, ինչպես ինձ ասել են, դեռևս կենդանի էին: Հրեշտակները տեսել են այս ամենը և հրեշտակները լսել են այս ամենի մասին:[8] ԱՍՏՎԱԾ տեսել է այս ամենը և ԱՍՏՎԱԾ լսել է այս ամենի մասին:[9] Շնարհակալ լինենք ԱՍՏԾՈՒՆ Վերջին Դատաստանի Օրվա համար, որը շուտով գալու է:[10]

Ղուկասի գրքի 12-րդ գլխի 1-5-ում ասված է. «Մինչ Յիսուսի շուրջը բիւրաւոր ժողովուրդ հաւաքուեց՝ իրար կոխոտելու աստիճան, ՆԱ [ՀԻՍՈՒՍԸ] սկսեց նախ իր աշակերտներին ասել. «Նախ դուք ձեզ զգո՛յշ պահեցէք փարիսեցիների [կրոնապաշտ հրեաները] խմորից, որ կեղծաւորութիւնն է [մեղք է], որովհետեւ չկայ ծածուկ բան, որ չյայտնուի, եւ գաղտնի բան, որ չիմացուի, քանի որ, ինչ որ խաւարի մէջ ասէք, լսելի պիտի լինի լոյսի մէջ [հրեշտակների և ԱՍՏԾՈ կողմից]. եւ ինչ որ շտեմարաններում փսփսաք ականջների մէջ, պիտի քարոզուի տանիքների վրայ: Բայց ասում եմ ձեզ՝ ԻՄ սիրելիներին, մի՛ զարհուրէք նրանցից, որ մարմինն են սպանում եւ դրանից յետոյ աւելի բան անել չեն կարող, այլ ցոյց կը տամ ձեզ, թէ ումի՛ց պէտք է վախենաք: Վախեցէ՛ք ՆՐԱՆԻՑ, ով սպանելուց յետոյ ԳԵՀԵՆ նետելու իշխանութիւն ունի: Այո՛, ասում եմ ձեզ, վախեցէ՛ք ՆՐԱՆԻՑ [ԱՄԵՆԱԿԱՐՈՂ ԱՍՏԾՈՒՑ]»:

ԱՍՏՎԱԾ եկավ Ադամի մոտ, որը չգիտեր, թե ինչ անել: ԱՍՏՎԱԾ պատվիրեց նրան ուտել ԿՅԱՆՔԻ ծառից, որպեսզի հավերժ ապրի, բայց նա գերադասեց ուտել բարու և չարի գիտելիքի ծառից, որից ԱՍՏՎԱԾ նրան պատվիրել էր չուտել:[11] Կրկին, ԱՍՏՎԱԾ եկավ Ադամի մոտ, փրկության գիտելիքով, բայց Ադամը գերադասեց Սատանայի կրոնը (գիտելիքը): ԱՍՏՎԱԾ փրկության գիտելիքով նաև գալիս է ամբողջ աշխարհի մոտ, ներառյալ ձեզ, բայց ինչպես կենդանիների և մարդկանց մարմինների վրայի տիզերը, դուք ավելի հավանական է, որ ընտրեք որևէ սատանայական կրոն, այդպես չէ՞:

ԱՍՏՎԱԾ եկավ Սեթի մոտ փրկության գիտելիքով, և Սեթը սկսեց ԱՍՏԾՈՒՆ երկրպագել: Ապա ԱՍՏՎԱԾ եկավ Ենոքի մոտ, ով քայլեց ԱՍՏԾՈՒ հետ և ԱՍՏՎԱԾ վերցրեց նրան ԻՐ հետ ԴՐԱԽՏ՝ ԻՐ հետ լինելու համար:[12] Դրանից հետո ԱՍՏՎԱԾ եկավ Նոյի մոտ:[13] Նոյը չէր եկել ԱՍՏԾՈ մոտ, ինչպես մյուսները չէին եկել: Աբրահամը կռապաշտ կրոնի հետևորդ էր, բայց ԱՍՏՎԱԾ եկավ նրա մոտ: Աբրահամը չէր եկել ԱՍՏԾՈ մոտ:[14] Մովսեսը չէր եկել ԱՍՏԾՈ մոտ, ԱՍՏՎԱԾ հայտնվեց և եկավ Մովսեսի մոտ:[15] ԱՍՏՎԱԾ եկավ հարյուրավոր այլ մարդկանց մոտ, օրինակ՝ աշակերտների: ՆԱ եկավ Պողոս Առաքյալի մոտ, ով կրոնավոր էր, դրանով փրկելով նրան:[16] Պողոսը օգտակար դարձավ ԱՍՏԾՈՒՆ իր փրկությամբ, հաղթական պայքար մղելով մթության ուժերի դեմ, որը նաև նա ներառեց ամբողջ Նոր Կտակարանի, մոտավորապես, երկու երրորդ գրառումների մեջ: Այս բոլորը ներառված են իրական փրկության մեջ:

Դանիէլի գրքում երեք Եբրայեցի երեխաներին (Սեդրակը, Միսաքը և Աբեդնագովը) գցել էին կրակե հնոցը, քանի որ նրանք չէին երկրպագում թագավորի ոսկե կուռքին, որովհետև հրաժարվում էին պատկանել թագավորի կրոնին:[17] «եւ տեսնում էին այն մարդկանց, որոնց մարմնին կրակը չէր փասել, նրանց գլխի մազերը չէին խանձուել, նրանց անդրավարտիքները չէին գունաթափուել, եւ կրակի հոտ չկար նրանց վրայ: Նաբուքոդոնոսոր թագաւորը նրանց առաջ երկրպագեց Տիրոջը, պատասխանեց եւ ասաց. «Օրհնեալ է Սեդրակի, Միսակի եւ Աբեդնագովի ԱՍՏՈՒԱԾԸ, որ ուղարկեց ԻՐ Հրեշտակին եւ փրկեց ԻՐ ծառաներին, որովհետեւ նրանք յոյս էին դրել ՆՐԱ վրայ, անարգել էին թագաւորի խօսքը եւ մատնել իրենց մարմինը կրակին, որպէսզի չպաշտեն եւ

*(Շարունակությունը էջ 4-ում)*

**9** Երկրորդ Օրէնք 31:21, Թագաւորութիւններ Բ 19:27, Մնացորդաց Ա 28:9, Յոբ 31:4, 34:21-22, 25, Սաղմոս 44:21, 139:1-6, 12-16, Առակներ 15:3, 11, Եսայի 29:15-16, Ղուկաս 16:15, Եբրայեցիներին 4:13, Յովհաննէս Ա 3:20 **10** Ժողովող 12:13-14, Դանիէլ 7:9-10, Մատթէոս 3:12, 24:3-15, 29-44, Մարկոս 4:22, Հռոմէացիներին 2:5-13, 16, 14:10-12, Կորնթացիներին Բ 5:10-11, Թեսաղոնիկեցիներին Բ 1:7-10, Տիմոթէոսին Բ 4:1, 8, Եբրայեցիներին 10:30-31, Յուդա 14-15, Յայտնութիւն 1:7, 11:18, 20:11-15 **11** Ծննդոց 2:16-17, 3:1-6

**12** Ծննդոց 5:22-24, Եբրայեցիներին. 11:5 **13** Ծննդոց 6:11-18, 22, Եբրայեցիներին 11:7 **14** Ծննդոց 12:1-8, 17:1-9, Գործք 7:2-3, Եբրայեցիներին 11:8 **15** Ելք գլ 3, Գործք 7:29-34 **16** Գործք 9:1-22, Գաղատացիներին 1:13-19 **17** Դանիէլ գլ 3

## Մալաուի

Հարգելի Թոնի Ալամոյի Եկեղեցի,

Նախ և առաջ ընդունեք ողջույնները Տեր Հիսուս Քրիստոսի անունով: Հուսով եմ և կարծում եմ, որ դուք լավ եք: Մենք էլ չենք կարող բողոքել: Տերը մեզ առաջնորդում է օր ու գիշեր:

Երբ տարածում և վկայում ենք Թոնի Ալամոյի գրականությունը, մեզ միշտ սովորեցնում է Սուրբ Հոգին, ինչպես որ գրված է Գործքի գրքի 1:8-ում և Մարկոսի գրքի 16:15-16-ում, որովհետև Ամենակարող Աստված Քահանա Ալամոյին տվել է մեծ ուժ ողջ աշխարհին հասցնելու Աստծո՝ խոսքը գրականությունը, Աստվածաշունչը և գրքերը՝ քարոզելով: Այսպիսով, երբ մենք բերում ենք այս ուժը փողոցներ, մարդիկ իսկապես դառնում են Աստծուն, օրինակ՝ մուսուլմանները, հինդուսները, Յեհովայի վկաները և այլք, քաղաքներում, հեռավոր տարածաշրջաններում և նաև բանտերում:

Այստեղ Մալաուիյում, մենք Քահանա Ալամոյին հիշատակում ենք մեր ամենօրյա աղոթքներում, որ չնայած նա հիմա բանտում է, բայց մի օր նա ազատ կարձակվի՝ Տիրոջ անունով: Փաստաբանները փոփոխում են նրա լսումների ամսաթվերը, նա կորցրել է իր տեսողությունը, բայց նա չպետք է անհանգստանա այս ամենի համար, քանի որ Աստված կարող է և մի օր նա վերջ կտա այս բոլոր փորձություններին: Յոբը և Ջոզեֆը անցել են որոշ փորձություններով: Ջոզեֆին իր հարազատները վաճառեցին, բայց Աստված բարձրացրեց նրան: Այնպես որ, եթե Ամերիկայի կառավարությունը փորձությունների միջով է անցկացնում Քահանա Ալամոյին, Աստված վերահսկում է: Մի օր ամեն ինչ լավ կլինի Աստծո անունով:

Մենք աղոթում ենք ձեզ համար օր ու գիշեր և ծոմ ենք պահում, մինչև որ Թոնին ազատ արձակվի բանտից:

Ձերն Աստծո անունով,

Քահանա Դանիլեք Հարրի Միթերա,

Թոնի Ալամոյի Եկեղեցիներ, Բլէնթըր, Մալաուի, Աֆրիկա

## ԿՐՈՆԻ ԵՎ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

*(Շարունակությունը էջ 3-ի)*

չերկրպագեն բոլոր աստուածներին [այլ կրոն], այլ՝ միայն իրենց ԱՍՏԾՈՒՆ» (Դանիէլ 4:94-95): Նոր Կտակարանում, Յովհաննես Առաքյալը նմանատիպ փորձություն ունեցավ: Նրան եռացրեցին ձեթի մեջ, բայց նա չվառվեց: Ոչ էլ մահացավ եռալուց հետո:

Հրաշալի է, որ ամբողջ Աստվածաշնչի մեջ, երբ մարդը հաղորդակցվում է ԱՍՏԾՈ հետ, որովհետև ԱՍՏՎԱԾ է նրա հետ առաջինը կապ հաստատում: ԱՍՏՎԱԾ առաջինը եկավ Յոբի մոտ, և ապա Յոբը ծառայեց ՆՐԱՆ: Աստվածաշնչում չկա որևէ դեպք, երբ մարդը սկսում է ԱՍՏԾՈՒՆ ծառայել, որովհետև նա առաջինն է մտածում ԱՍՏԾՈՒՆ ծառայելու մասին: Ամբողջ Աստվածաշունչը պատմում է, թե ինչպես ԱՍՏՎԱԾ եկավ գտնելու մարդուն: Մի օր Եսայիին տեսիլք ունեցավ և լսեց ԱՍՏԾՈ ձայնը. «Ո՞ւմ ուղարկեմ, եւ կամ ո՞վ կը գնայ այդ ժողովրդի մօտ»: Ու ես ասացի. «Ահաւասիկ ես, ի՛նձ ուղարկիր» (Եսայի 6:8): Տեսիլքն ունենալուց հետո Երեմիան մարգարեացավ, որպեսզի փոխանցի Իսրայելին այն խոսքերը, որ ՅԵՀՈՎԱՆ պատվիրեց նրան ասել (Երեմիա 1: 4-19): Դանիելը նույնպես տեսիլք ունեցավ, պաս պահելուց և աղոթելուց առաջ, աղաչելով ԵՀՈՎԱՅԻՆ վերականգնել Երուսաղեմը (Դանիէլ գլուխ 7-9): Ամբողջ Աստվածաշունչը ցույց է տալիս, որ ԱՍՏՎԱԾ առաջինն է գալիս մարդու մոտ նախքան մարդը սկսում է ծառայել ԱՍՏԾՈՒՆ:

ԱՍՏՎԱԾ հաղորդակցվում է ձեզ հետ իմ միջոցով և այլ փրկված քահանաների և ավետարանիչների հետ, այնպես որ դուք պատրվակ չունեք: ԱՍՏԾՈ ՀՈԳԻՆ, ապրելով և գործելով մեր մեջ և մեր միջոցով, ովքեր փրկվել են, ձեզ հետ է հաղորդակցվում, ոչ թե կրոնի, այլ հանուն ձեր անձնական փրկության և ուրիշների փրկության:

Հռոմեացիների գրքի 10:12-15-ում պարզորոշ ասված է, որ ԱՍՏԾՈ կողմից ուղարկված քարոզիչները պետք է գան աշխարհ, որպեսզի մարդիկ հավատան փրկությանը այս խոսքերով. «որովհետեւ չկայ խտրութիւն հրեայի եւ հեթանոսի, քանզի նո՛յն ՏԷՐԸ բոլորինն է, հասնող բոլորին, որոնք կանչում են ՆՐԱՆ. որովհետեւ ամենայն ոք, որ ՏԻՐՈՋ անունը կանչի, կը փրկուի: Իսկ ինչպէ՞ս կանչեն ՆՐԱՆ, ում չհաւատացին. կամ՝ ինչպէ՞ս հաւատան, ում մասին չլսեցին. կամ՝ ինչպէ՞ս լսեն առանց մէկի քարոզելուն. կամ՝ ինչպէ՞ս քարոզեն, եթէ չառաքուեցին»: Ինչպէս գրուած էլ է. «Ի՛նչ գեղեցիկ են ոտքերը անոնց՝ որոնք խաղաղութիւն կաւետեն, բարի բաներ կաւետեն»:

Կրկին, ՀԻՍՈՒՍԸ մեզ է ուղարկել ձեզ մոտ: ԱՍՏՎԱԾ է փնտրում ձեզ, ոչ թե դուք եք փնտրում ԱՍՏԾՈՒՆ: Այս փաստը նկարագրված է Ղուկասի գրքի 10-րդ գլխի 1-12 հատվածներում, որոնք ասում են. «Այնուհետեւ ՏԷՐԸ նշանակեց ուրիշ եօթանասուներկու հոգի [աշակերտներին] եւս եւ նրանց ԻՐԵՆԻՑ առաջ երկու-երկու ուղարկեց այն բոլոր քաղաքներն ու վայրերը, ուր ԻՆՔԸ գնալու էր: Եւ նրանց ասաց. «Հունձն առատ է, իսկ մշակները՝ սակաւ: Արդ, խնդրեցէ՛ք հնձի տիրոջը, որ մշակներ ուղարկի ԻՐ հնձի համար: Գնացէ՛ք, ահա ուղարկում եմ ձեզ իբրեւ գառներ գայլերի մէջ: Մի՛ վերցրէք ո՛չ քսակ, ո՛չ մախաղ, ո՛չ կօշիկներ եւ ճանապարհին ո՛չ ոքի ողջոյն մի՛ տուէք: Որ տունը մտնէք, նախ ասացէ՛ք. «Խաղաղութի՛ւն այս տանը». եթէ այնտեղ կայ խաղաղասէր ՄԱՐԴ, ձեր խաղաղութիւնը նրա վրայ կը հանգչի. ապա թէ ոչ՝ ձե՛զ կը վերադառնայ: Նոյն տանը գիշերեցէ՛ք, կերէ՛ք եւ խմեցէ՛ք նրանց ունեցածից, որովհետեւ մշակը արժանի է իր վարձին. տնից տուն մի՛ տեղափոխուէք: Ո՛ր քաղաքը որ մտնէք եւ ձեզ ընդունեն, կերէ՛ք, ինչ որ ձեր առաջ դնեն: Եւ բժշկեցէ՛ք դրա մէջ եղած հիւանդներին եւ նրանց ասացէ՛ք. «Մօտեցել է ձեզ ԱՍՏԾՈՒ արքայութիւնը»: Իսկ ո՛ր քաղաքը որ մտնէք եւ ձեզ չընդունեն, երբ դուրս գաք նրա հրապարակները, ասացէ՛ք. «Ձեր քաղաքից մեր ոտքերին կպած փոշին անգամ թօթափում ենք ձեր վրայ. բայց իմացէ՛ք, որ մօտեցել է ԱՍՏԾՈՒ արքայութիւնը»: Ասում եմ ձեզ, որ սոդոմայեցիների համար դատաստանի օրը աւելի

## Հաիթի

*(Թարգմանված է ֆրանսերենից)*

Հարգելի Քահանա Թոնի Ալամո, Աստծո ծառա,

Թող Տեր Հիսուսը օգնի ձեզ ձեր եկեղեցու բոլոր գործերում, հատկապես, որ ավետարանչական գործունեությունը միշտ տանի հոգիներին ամբողջ աշխարհում դեպի Հիսուս: Մենք շատ շնորհակալ ենք փաթեթների համար (գրականությունը, Մեսիյա գիրքը և Աստվածաշնչերը), որոնք դուք ուղարկել եք, որպեսզի մենք կարողանանք ծաղկեցնել Հիսուս Քրիստոսի Ավետարանը: Շնորհակալություն: Դրախտը դատարկ չէ. Աստված հաշվի է առել այն: Շատ շուտով Քրիստոսի Հարսնացուների Խումբը մի անակնկալ կուղարկի ձեզ, որպեսզի խրախուսի ձեզ հանուն Հիսուս Քրիստոսի կատարած աշխատանքի համար: Տեղյակ պահեք մեզ, երբ ստանաք այդ անակնկալը:

Մենք ուզում ենք տարածել գրականությունը ավետարանչության ձևով հետևյալ օրերին 2013 թվ-ի ապրիլի 1, 2, 7, 8, 10-ին, որոնք մենք անվանել ենք «Մեծ ավետարանչական քարոզարշավի ժամը Փոնտ-Ռուժում»: Այն ներառում է երկօրյա ծառայություններ բաց երկնքի տակ՝ համալրված ձայնային համարգով և եռօրյա ավետարանչական գործունեություն Աստծո համար: Խնդրում եմ, օգնեք մեզ ձեր աղոթքներով, քանի որ սատանան մեզ հետ պատերազմում է, բայց հաղթանակը մերն է լինելու:

Մեր գրականությունը վերջացել է, այնպես որ, խնդրում ենք ձեզ, նոր գրականություն ուղարկել մեզ:

Մենք շարունակում ենք աղոթել ձեր համար և մի անհանգստացեք, քանի որ դուք Քրիստոսի պաշտպանության տակ եք: Հաղթանակը լինելու է ձերը և ձեր ընտանիքինը:

Միշտ պահպանեք սրբությունը, սրտացավությունը, ծոմապահությունը և եղբայրական սերը: Պաշտպանեք ձեզ այս կամակոր սերունդից:

Յեզար Ֆրանցիս Կրտսեր
Գլխավոր Համակարգող (Քրիստոսի Հարսնացուների Խումբ)
Փոնտ-Ռուժում, Հաիթի

տանելի պիտի լինի, քան այն քաղաքի համար»:

Նրանք, ովքեր հավատում են կրոնին, նախաձեռնում են ծառայել այն բանին, ինչը նրանք աստված են համարում, մինչդեռ նրանք, ովքեր հավատում են ՔՐԻՍՏՈՍԻՆ, ծառայում են ԱՍՏԾՈՒՆ, այն բանից հետո, երբ ԱՍՏՎԱԾ հաղորդակցվեց նրանց հոգիների հետ: Այս պատճառով ես ասում եմ, որ ոչ ոք չպետք է շտապի ծառայել հորինված աստծուն՝ կրոնին, սուտ ծառայելու համար: Մենք ծառայում ենք ԱՍՏԾՈՒՆ, միայն երբ ՆԱ ԻՐ ՀՈԳՈՒ միջոցով մեր մեջ է:[18] Եթե մենք ծառայում ենք ԱՍՏԾՈՒՆ, երբ ՆԱ դեռ մեր սրտում չի ապրում, մենք ավելի շատ կրոնական ենք, քան փրկված ԱՍՏԾՈՎ: Պատկերավոր ասած, շատ մարդիկ այսօր կախում են իրենց վրա «քրիստոնյայի» պիտակը, բայց ներսում նրանք ներգրավված են կրոնական ձեռնարկության մեջ: Նրանք Քրիստոնյաներ են իրենց մտքում, բայց իրականում նրանք պարզապես կրոնական են:

Ի՞նչ է նշանակում լինել Քրիստոնյա: Քրիստոնյան այն մարդն է, ում ներսում ՔՐԻՍՏՈՍՆ է ապրում և աշխատում է ՀՈԳՈՒ միջոցով, ով ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ միջոցով է ծառայում ԱՍՏԾՈՒՆ:[19] Մյուս կողմից, կրոնական մարդը նա է, ով հավատում է, որ ծառայում է աստծուն և ցանկանում է անել այն, ինչը նրա կարծիքով աստված է ուզում իրենից: Սա է այսօր շատ դավանող Քրիստոնյաների իրավիճակը: Նրանք Քրիստոնեություն են դավանում, բայց նրանք վերածնված չեն: Նրանք փրկված չեն, հետևաբար, նրանք ՔՐԻՍՏՈՍԻՆ չգիտեն և գաղափար անգամ չունեն, թե ինչպես պետք է ծառայեն ՆՐԱՆ: Նրանք չեն կարող ՔՐԻՍՏՈՍԻՆ հետևել, քանի որ նրանք չեն կարող լսել ՆՐԱՆ:[20] Հետևաբար, նրանք ինքնակամ են և իրական ԱՍՏՎԱԾ չի կարող նրանց օգտագործել: Նրանք անօգուտ են: Սակայն, իրական Քրիստոնյաների դեպքում ԱՍՏՎԱԾ ՄԻԱԿՆ է, ով ուղղորդում է նրանց ամենուր: Նրանք պարզապես ասում են. «Այո. Ամեն»: ԱՍՏՎԱԾ է նրանց ուղղորդողը և նրանց ԱՍՏՎԱԾԸ: Սա ամբողջովին տարբերվում է կրոնական մարդկանց ուղղուց:

Այն բանից հետո, երբ Պողոս Առաքյալը հանդիպեց ԱՍՏԾՈՒՆ Դամասկոսի ճանապարհին, նրա առաջին բառերն էին. «Ո՞վ ես, Տե՛ր» (Պողոսը գիտեր, որ դա ԱՍՏՎԱԾ է, այլապես երբեք նման հարց չէր տա. «Ո՞վ ես, Տե՛ր»): Հետո ԱՍՏՎԱԾ ասաց նրան. «Ես Յիսուսն եմ, որին դու հալածում ես [երբ որևէ մեկը հալածում է ՔՐԻՍՏՈՍԻ եկեղեցու անդամներից մեկին, նա հալածում է ՔՐԻՍՏՈՍԻՆ: Սրա պատճառն այն է, որ մենք ՆՐԱ մարմինն ենք, ՆՐԱ տաճարը, ՔՐԻՍՏՈՍԻ Մարմինը]»:

Կորնթացիների առաջին գրքի 3:16-17-ը ասում է մեզ. «Չգիտե՞ք, որ ԱՍՏԾՈՒ տաճար էք դուք, եւ ԱՍՏԾՈՒ ՀՈԳԻՆ է բնակւում ձեր մէջ: Եթէ մէկն ԱՍՏԾՈՒ տաճարն [ՏԻՐՈՋ մարմինը, որը մենք ենք], ապականի, ԱՍՏՈՒԱԾ էլ նրան պիտի ապականի. որովհետեւ սուրբ է ԱՍՏԾՈՒ տաճարը, որը դուք էք»: Այն Սուրբ է, որովհետև մենք չենք հետևում մահացած կրոնի, կրոնի, որում ՔՐԻՍՏՈՍԸ իր ՀՈՐ և ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ հետ միասին չեն ապրում, բայց դուք փրկված, վերածնված Քրիստոնյաներ եք: ՔՐԻՍՏՈՍԸ իր ՀՈՐ, ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ հետ ապրում է ձեր մեջ, եթե դուք փրկված եք, ԱՍՏԾՈ տաճարն եք: Ահա այս պատճառով ՄԱՐՄԻՆԸ, որում ԱՍՏՎԱԾ է ապրում, Սուրբ է, և մարմինը, որում ԱՍՏՎԱԾ չի ապրում, Սուրբ չէ, այլ անսուրբ է: Դուք, անկասկած, կուզենաք ԱՍՏԾՈ Դատաստանի ժամանակ ավելի շատ Սուրբ լինել, քան որևէ այլ բան:

Աշխարհը լիքն է շեղումներով և զվարճություններով: Դրանք Սատանայի՝ ձեր ուշադրությունը շեղելու ուղիներն են, որոնք ստիպում են ձեր միտքը շեղվել տիեզերքի միակ կարևոր բանից, որը ձեր հոգին պահում է ԱՍՏԾՈ թագավորությունից և պահում է ՔՐԻՍՏՈՍԻՆ ԻՐ ՀՈՐ հետ միասին ձեր մեջ: «Դադարեցէ՛ք յոյս դնել այն մարդու վրայ,

*(Շարունակությունը էջ 8-ում)*

**18** Եզեկիէլ 36:27, Յովհաննէս 14:15-20, 23, 26, 15:1-11, 26, 16:7-14, Հռոմէացիներին 8:1, 10-11, 26-28, Կորնթացիներին Ա 3:9, 16-17, 6:19-20, Կորնթացիներին Բ 6:16-18, Եփեսացիներին 2:18-22, Փիլիմոնին 2:12-13, Կողոսացիներին 1:27-29, Տիմոթէոսին Բ 1:14, Յովհաննէս Ա 4:4, 5:12 **19** Եսայի 30:21, Յովհաննէս 15:1-5, 17:21-23, 26, Կորնթացիներին Ա 15:10, Կորնթացիներին Բ 5:17-21, Գաղատացիներին 2:20, Եփեսացիներին 3:16-21, Յովհաննէս Ա 2:20, 27 **20** Յովհաննէս 8:42-43, 10:27

## Արկանզաս

Քահանա Թոնի,

Մի քանի օր առաջ ինձ զանգահարեց Վերան, Նյու Օրլեանի հյուրանոցի կառավարիչը: Նա, ով օգնում է քույրերին և եղբայրներին կարիքի դեպքում, օրինակ, երբ նրանց միրահատություն էր անհրաժեշտ և նրանք զնացին Նյու Օրլեանի հիվանդանոց:

Վերան երբեք չի մոռացել այն խորհուրդը, որը դուք տվեցինք նրան, երբ նա բազմաթիվ խնդիրներ ուներ հյուրանոցի իր աշխատակիցների հետ: Դուք ասացիք. «Ի՞նչու աշխատանքի չես վերցնում Քրիստոնյաների, ովքեր լավ աշխատանքի կարիք ունեն և դուք բոլորդ միասին կարող եք Աստծուն փնտրել: Ես կարծում եմ, որ քո բիզնեսը կծաղկի»: Վերան անմիջապես հետևեց ձեր խորհրդին և շատ շուտով նա ուներ Աստվածաշնչին հավատացող Քրիստոնյաների ամբողջական մի անձնակազմ, որոնք հանդիպում էին ամեն առավոտ աշխատանքի զնալուց առաջ, Աստվածաշունչ կարդում և միասին աղոթում:

Հրաշք տեղի ունեցավ. բոլորը միասին աշխատում էին նվիրվածությամբ և երջանիկ տրամադրվածությամբ ամեն ինչ մաքրեցին ու կարգավորեցին, և այդ հյուրանոցային բիզնեսը սկսեց թնդալ ու նրանք մրցանակ ստացան Տարածաշրջանային Գրասենյակից:

Տերը արթնացրեց Վերային մոտավորապես գիշերվա ժամը 1:00-ին, այն գիշերը, երբ Փոթորիկ Կաթրինան հարվածեց Նյու Օրլեանը: Աստված պատվիրեց նրան հավաքել իր և ամուսնու շորերը ու որոշ պարագաներ և ուղևորվել Ջեքսոն, Միսիսիպի, «ՀԵՆՑ ՀԻՄԱ, ԱՐԱԳ»: Վերան և նրա ամուսինը հյուրանոցում էին գիշերում, որովհետև նրանք Գուլֆորդի տունը նոր էին վաճառել:

Աստված այն ժամանակ ոչ միայն նրա կյանքը փրկեց, Նա նաև հաղթահարել է կրծքի քաղցկեղը: Ինչպես դուք ասացիք, Քահանա Ալամո, նա ողորմության արժանացավ՝ օգնելով այն եղբայրներին և քույրերին, ովքեր տարիներ շարունակ օգնության կարիք ունեին և Աստված ներեց նրան:

Նա լսել է CD-ներով այն հաղորդագրությունները, որոնք Աստված ձեզ փոխանցել է, և ես ուզում եմ, որ իմանաք, թե որքան է նա սիրում Տիրոջը և աղոթում է ձեր համար ու հավատում է, որ Աստված մի հզոր քայլ կձեռնարկի ձեր համար, որովհետև դուք Աստծուց եք և դուք ինքներդ այնքան ողորմություն եք ցանել:

Փառք Աստծո

Մերի Անե, Տեխարկանա, Արկանզաս

## Հնդկաստան

Սիրելի եղբայրներ Քրիստոսի անունով,

Տեղեկացնում եմ ձեզ, ի փառս Աստուծո, մեր հավաքներն ավարտվեցին լի հրաշքներով: Ավելի քան 1000 անդամներ մասնակցեցին: Այս հավաքների ժամանակ ես մարդկանց մի մեծ բազմության ներկայացրեցի ձեր գրականությունը և այնքան շատ անդամներ ընդունեցին Տիրոջը:

Փառքն Աստծունն է: Յուրաքանչյուրն աղոթեց մեր Քահանայի համար: Աղոթեք մեզ համար:

Ձեր սիրող եղբայր,
Սոլման Ռաջու Կոլա,
Անդրա Պրադեշ, Հնդկաստան



## Ֆիլիպիններ

Շատ շնորհակալ եմ, Քահանա Թոնի, այս հրաշալի «Առաքելների աղացումը և կրճատում» հոդվածի համար: Փառքն Աստծունն է: Շատ հավանեցի այն, քանի որ այն ներառում է կարգապահություն:

Կարգապահությունն այնքան անհրաժեշտ է այսօր բոլոր Քրիստոնյաներին ամբողջ աշխարհում:

Քահանա Սեսիլիո Հ. Ասիս. Յունիոր
Ալբայ, Ֆիլիպիններ



*Դարակոնդա Վիդյա Սագարը բաժանում է Քահանա Ալամոյի հոգիներ շահող գրականությունը, որը թարգմանված է Տելեգու լեզվով, Վիսախապատնամի, Անդրա Պրադեշի (Հնդկաստան) գյուղերում և քաղաքներում:*

## Քալիֆորնիա

Իմ եղբայրներին՝ Քրիստոսի անունով,

Հուսամ, որ դուք բոլորդ լավ եք Քրիստոսի անունով: Միշտ օրհնված եմ նորություններ իմանալու էլեկտրոնային նամակներով զբաղվող թիմից: Շնորհակալ եմ ինձ ձեր աղոթքների մեջ պահելու համար: Չկա մի օր, որ դուք չլինեք իմ աղոթքների մեջ, հատկապես, Քահանա Թոնին: Այսօր ես մի գրականությամբ լի արկղ ստացա և այնքան ոգևորված էի տեսնելու այդ շատ բազմազան գրականությունը, որը ես չունեի: Սա իսկապես նման էր Սուրբ Ծննդյան նվեր ստանալուն: Ես զգում էի Աստծուն գրականության մեջ: Վերցրեցի «Աստված մայր չունի» գիրքը և սկսեցի բարձրաձայն կարդալ, որպեսզի ովքեր ականջներ ունեն՝ լսեն: Փառք Աստծո:

Ոչ ավել, քան մեկ շաբաթ առաջ խոսում էի կնոջս հետ վառելիքի գնի մասին, որն անհրաժեշտ է հիմա Լոս Անջելեսի եկեղեցի գնալու համար: Հետո ձեր հրավերը ստացա, փորձելու եմ ընդունել: Որոշ ժամանակ առաջ հետադարձով ճանապարհորդությունն արժեր հարյուր դոլար, իսկ հիմա այն արժե երկու հարյուր դոլար, բայց ես գիտեմ, որ աստվածների Աստվածը և Տերը մի դուռ կբացի որևէ կերպ, եթե Նա ուզենա: Շնորհակալ եմ հրավերի համար: Աստծո ձայնը ինձ ասաց երեք շաբաթվա համար իրերս հավաքել և գնալ եկեղեցի, ես օրհնված էի այցելելու Քրիստոնյաներին առաջ, և դա նախկինում և մինչև հիմա իմ ամենահզոր փորձառությունն էր:

Երաժշտությունը շատ գեղեցիկ էր, և ես զգում էի Աստծո շարժումը ամեն ծառայության մեջ: Ես զգում էի Աստծուն, երբ վարում էի մեքենան հովիտով վեր դեպի եկեղեցի և շատ կուզենայի նորից վերապրել այդ զգացողությունը: Ավելորդ է նշել նույնիսկ, որ կերակուրը նույնպես շատ համեղ էր, վկայությունները լսելը, եղբայրների հետ փողոցներում աշխատելը և նրանց աշխատանքը տեսնելը հիասքանչ էր: Ինչպես էին նրանք պատասխանում ցանկացած հարցի Աստծո Խոսքով, այդ ժամանակ ես գիտեի, որ նրանք ունեն այն, ինչ ուզում եմ: Հիմա, մի քանի տարի անց և շատ բան սովորելուց հետո, ես էլ եմ հասնում դրան:

Այսպիսով, առաջին բանը, որ նոր ռոք աստղ պապն ասաց ամբոխին այն է, որ պատրաստվում է գնալ աղոթելու Կույս Մարիամին: Խոսք կույրի մասին, ով առաջնորդում է կույրերին դեպի փոս: Շատ նման է: Ահա թե ինչու ես ճիշտ համարեցի կարդալ «Աստված մայր չունի» գիրքը: Քահանան միշտ ճիշտ տեղեկատվություն է տալիս իմ կյանքում: Իմ հաջորդ նամակներում ես մի վկայություն եմ ուզում կիսել ձեզ հետ ՉԹՕ-ների, Քահանայի և Սյուզիի մասին, և թե ինչպես ամեն ինչ նյութականացվեց իմ կյանքում: Ես խնդրում եմ Տիրոջը օրհնել ձեզ բոլորիդ այսօր և ամեն օր, որպեսզի շատ ավելի զառներ բերենք դեպի հոտը, ինչպես դուք բոլորդ անում եք այդքան հրաշալի կերպով:

Փառք Աստծուն
Բարի գիշեր
Եղբայր Թոմ Սի
Քալիֆորնիա

# Զամբիա

Սիրելի Քահանա,

Թույլ տվեք սկսել գնահատանքի խոսքերով դեպի այն աշխատանքը, որին ձեզ կանչել է Տեր Հիսուս Քրիստոսը: Առաջին անգամ ես ստացա Աստվածաշնչային գրականություն ձեր եկեղեցուց մոտավորապես 2012 թվ.-ի հունիս ամսին: Ընդհանուր առմամբ, ես ստացել եմ երեք հարյուր ութսուներկու թերթ և այլ գրականություն, վեց «Մեսիյա» գիրք և մեկ Արքա Հակոբի Աստվածաշունչը: Ինչպիսի գերազանց աշխատանք է կատարվել: Սա հիանալի է և անգնահատելի: Ես բավական խոսքեր չունեմ նկարագրելու իմ երախտագիտությունը, բայց ամենագետ Աստված վկա է, թե որքան բան է արել ձեր ոգեշնչող գրականությունը ինչպես իմ կյանքում, այնպես էլ նրանց կյանքերում, ում գրականությունը բաժանվել է:

Ամեն անգամ, երբ Տերը ինձ հնարավորություն և ժամանակ էր տալիս, գրականությունը տարածվում էր ուսանողական հանրակացարաններում, ավտոբուսներում, երբեմն էլ փողոցներում, խանութներում և այլ վայրերում, երբ ես ճանապարհորդում եմ կամ էլ քարոզչական գործունեության կամ անձնական այցի ընթացքում:

Իմ ընկերներից (եղբայրներ Տիրոջ անունով) ոմանք ստացել են «Մեսիյա» գիրքը և այլ գրականություն, որպեսզի օգտագործեն դրանք քարոզչության նպատակով ամեն անգամ, որտեղ Աստված նրանց կուղարկի: Սա պարզապես նշանակում է, որ ձեր ոգեշնչող գրականությունը հասել է աշխարհի տարբեր ծայրեր, Օ՛, մարդ Աստծո, մենք նույնպես աղոթում ենք և կարծում ենք, որ այս գրականությունը պետք է մեր ողջ երկրի ներսում (Զամբիայի) և երկրի սահմաններից դուրս տարածվի: Այո: Նրանք, ովքեր կարդացել և հավատում են ուժին,որը հստակ բացատրվում է ձեր գրականության մեջ՝ անշուշտ պիտի փրկվեն:

Մարդ Աստծո, ես կարող եմ վկայել, որ Աստծո սիրո հրաշքները, որ հստակ բացատրված են ձեր գրականության մեջ, ցույց են տալիս, որ դուք պարզապես քահանա և քարոզիչ չեք, ով այնպես է այրվում Սուրբ Հոգով, որ թույլ է տալիս Աստծուն բաժանել ՆՐԱ կյանքը այլոց միջև: Շատերը, ովքեր կարդացել են ձեր գրականությունը և եկել են եկել, վկայել են Քահանա Ալամոյի գրականության ետևում թաքնված հզորությունը: Նրանք լուսավորվում են անտեղյակությանից և իմաստությամբ լցվում, որպեսզի ավելի լուրջ աշխատեն Դրախտի Թագավորության համար:

Թող Ամենակարող Տերը, որը ձեզ կոչ է արել անել այս գերազանց աշխատանքը և ով մեր կյանքերը և ճանապարհները պահում է ԻՐ ամենակարող ձեռքում (Դանիել 5:23) ուժեղ և անբասիր պահի ձեզ մինչև մեր մեծ Աստված և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հայտնությունը: Ամեն: (Յուդա 24-25, Տիտոս 2:11-15, Կորնթացիներին Ա 1:7-9):

Ուստի, ես հիմա նոր խնդրանք ունեմ ուղարկել ինձ ձեր օծված գրականությունը հաջորդ տարիներին, եթե եկեղեցին առհասարակ ի վիճակի է ուղարկել դրանք նշված քանակով:

Ձեր ջանքերը և առավելագույն պատրաստակամությունը պետք է խորապես գնահատել:

Ձերը՝ Հիսուս Քրիստոսի վեհ անունով,
Զիմբա Մովսես
Լուսակա, Զամբիա

# Նյու Յորք

Թոնին Աստծո մարդն է: Ես արդեն քառասուներեք տարի է գիտեմ նրան: Թող Աստված օրհնի նրան: Ես անձամբ գիտեմ Թոնի Ալամոյին: Թոնին շատ ճիշտ է կաթոլիկ եկեղեցու մասին և շատ է տառապել ծայրահեղ հալածանքներից այդ մասին բարձրաձայնելու համար և Քրիստոսի համար Մարգարեական Հրեա լինելու համար: Թոնին լավ մարդ է Քրիստոսի համար, և սատանայական ուժերը շատ են նեղել նրան իր՝ Քրիստոսի նկատմամբ հավատքի համար: Մենք բոլորս պետք է աղոթենք նրա համար: Աստված թող օրհնի քեզ, Թոնի, Հիսուսի նկատմամբ քո դիրքորոշման համար և սատանայի դեմ պայքարելու համար:

Թեդ Ուիթուս — Նյու Յորք, Նյու Յորք

# Ավստրալիա

*(Թարգմանված է իսպաներենից)*

Եղբայր Թոնի Ալամոյին,

Հարգելի Եղբայր Քրիստոսի անունով, ես իսկապես շատ հավանեցի ձեր կայքը և լիովին համաձայն եմ ձեր հայտարարությունների հետ: Ես հավատում եմ, որ հիմա ժամանակն է լրջորեն ուսումնասիրել սուրբ գրությունները:

Խնդրում եմ, ես պաղատում եմ ձեզ, եթե կարող եք ուղարկեք ինձ «Մեսիյա» գիրքը, որը ներառում է երեք հարյուր երեսուներեք մարգարեություններ: Նաև, եթե ունեք որևէ այլ տեսագրություն կամ գիրք այս թեմաների շուրջ, որոնք այդքան կարևոր են, խնդրում եմ, ուղարկեք հավատացյալների համար:

Շատ շնորհակալ եմ և կաղոթեմ ձեր եկեղեցու համար, հայտարարելով այս ճշմարտությունները:

Օրհնություններ Քրիստոսի անունով,
Բեատրիս Մարտինես,
Ֆենթրի Գուլի, Վիկտորյա, Ավստրալիա

# Նյու Մեքսիկո

Մի քանի տարի առաջ Փիթեր Հերնանդեսը բանտում էր, ուղեղի ուռուցքով շատ հիվանդ: Բժիշկներն ասացին նրան, որ իրեն իննսուն օր է մնացել ապրելու: Նա նամակ գրեց Քահանա Ալամոյին, ով պատասխանեց Փիթերին, ուժեղացնելով նրա հավատքը և ոգեշնչելով նրան դուրս գալ այդ վիճակից և պնդելով, որ Փիթերը առողջանալու է: Ամբողջ եկեղեցին աղոթում էր նրա համար: Փիթերը շնորհակալական նամակ գրեց, որովհետև Տերը օգտագործեց Քահանա Ալամոյին իր ամենակարողությամբ և Փիթերը առողջացավ: Փիթերը շարունակում է ապրել հաղթանակած, առանց ուղեղի ուռուցքի որևէ նշույլի, որը ի միջիայլոց գոլֆի գնդակի չափեր ուներ: Տերը հարյուր տոկոսով առողջացրեց նրան, և շատ կարճ ժամանակ անց նա առողջացավ և վերամիավորվեց իր կնոջ և աղջկա հետ:

Ավետարանչական գրականությունը Լաս Կռուցում, Նյու Մեքսիկոյում տարածելու ժամանակ նա պատահաբար հանդիպեց եկեղեցուց մի զույգի: Փիթերը պատմեց նրանց, թե ինչպես է Քահանա Ալամոն միշտ օգնում ուրիշներին կարիքի մեջ, և թե ինչպես նա օգնեց իր ընտանիքին, հագուստ ուղարկելով և եկեղեցում կացարան առաջարկելով նրա ընտանիքի համար, քանի դեռ ինքը բանտում էր: Փիթերը ասաց, որ ուզում է ծառայել Թոնիին և եկեղեցուն իր փաստաբանական բիզնեսով և ուզում է տարածել մեր ավետարանչական գրականությունը իր տարածաշրջանում:



ԱԼԱՄՈՅԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՌՑԱՆՑ
www.alamoministries.com

## ԿՐՈՆԻ ԵՎ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

*(Շարունակությունը էջ 5-ի)*

որի շունչը ռունգերի մէջ է, որովհետեւ ի՞նչ վստահութիւն կարող է ներշնչել նա» (Եսայի 2:22):

Ձեր ընտրությունը սա է. ուզու՞մ եք լինել ԱՍՏԾՈ Սուրբ Մարմինը, թե ուզում եք լինել նս մեկ անսուրբ մարմին՝ այնտեղ, ուր Սատանան է ապրում: Եթե ձեր ընտրությունն է դառնալ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄԻՆԸ, ապա ասեք այս աղոթքը.

**Իմ ՏԵՐ, իմ ԱՍՏՎԱԾ, մեղքերիս քավություն եմ խնդրում հոգուս համար, ես, մեղսավորս:[21] Հավատում եմ, որ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ապրող ԱՍՏԾՈ ՈՐԴԻՆ է:[22]Հավատում եմ, որ ՆԱ մահացավ խաչի վրա և ԻՐ անգին արյունը թափեց իմ գործած բոլոր մեղքերի քավության համար:[23] Հավատում եմ, որ ԱՍՏՎԱԾ իր ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ուժի շնորհիվ կյանքի բերեց ՀԻՍՈՒՍԻՆ[24], և որ ՀԻՍՈՒՍԸ նստում է ԱՍՏԾՈ աջ կողմում և այս պահին լսում է իմ մեղքերի խոստովանությունը և այս աղոթքը:[25]ՏԵՐ ՀԻՍՈՒՍ, ես իմ սրտի դուռը բացում եմ և հրավիրում եմ ՔԵԶ իմ սրտի մեջ:[26] Մաքրիր իմ բոլոր մեղքերը ՔՈ անգին արյունով, որ ԴՈՒ թափեցիր խաչի վրա իմ փոխարեն Գողգոթայում:[27] ԴՈՒ չես հեռացնի ինձ, ՏԵՐ ՀԻՍՈՒՍ, ԴՈՒ կներես իմ մեղքերը և կփրկես իմ հոգին: Ես գիտեմ, որովհետև ՔՈ ԽՈՍՔԸ, Աստվածաշունչն է այդպես ասում:[28] ԱՍՏԾՈ ԽՈՍՔՆ ասում է, որ ԴՈՒ ոչ ոքից երես չես թեքի, այդ թվում և ինձնից:[29] Հետևաբար, ես գիտեմ, որ ԴՈՒ լսել ես ինձ, և ԴՈՒ պատասխանել ես ինձ, և ես գիտեմ, որ փրկված եմ:[30] Ես շնորհակալ եմ ՔԵԶԱՆԻՑ, ՏԵՐ ՀԻՍՈՒՍ, իմ հոգին փրկելու համար, և ես ցույց կտամ իմ շնորհակալությունը ՝ հետևելով ՔՈ հրամաններին և այլևս մեղք չգործելով:[31]**

Փրկությունից հետո, ՀԻՍՈՒՍԸ պատվիրեց մկրտություն անցնել, ամբողջովին ընկղմվել ջրի մեջ հանուն ՀՈՐ, և ՈՐԴՎՈ և ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ:[32] Պետք է ջանասիրաբար ուսումնասիրել ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ (Հին և Նոր կտակարանների) եբրայերեն և հունարեն բնօրինակների թարգմանությունը և անել այն ամենը, ինչ այնտեղ ասված է՝ մինչև քո վերջին օրը:[33]

ԱՍՏՎԱԾ ուզում է, որ դու պատմես քո փրկության մասին մյուսներին: Դու կարող ես դառնալ Քահանա Թոնի Ալամոյի Ավետարանչական գրականության տարածողը: Մենք անվճար կուղարկենք քեզ այդ գրականությունը: Ավելի շատ տեղեկատվություն ստանալու համար զանգահարեք կամ էլեկտրոնային նամակ ուղարկեք մեզ: Եվ տարածեք այդ ուղերձները:

Եթե ուզում եք, որ աշխարհը փրկվի, ինչպես ՀԻՍՈՒՍՆ է պատվիրում, ապա մի կողոպտեք ԱՍՏԾՈՒՆ, ԻՐ տասանորդները: Աստված ասում է. «Մի՞թե մարդը կկողոպտի ԱՍՏԾՈՒՆ. Իսկ դուք կողոպտում եք ԻՆՁ: Բայց դուք ասում եք. «ՔԵԶՆԻՑ ի՞նչ ենք գողացել: Տասանորդներն ու նվիրաբերությունները: Անեծքով անիծված եք, քանի որ կողոպտում եք ԻՆՁ, ամբողջ ազգը և [նույնիսկ ամբողջ աշխարհը]: Բոլոր տասանորդները [համախառն եկամուտի 10%-ը] ամբար բերեք, որպեսզի ՏԱՆՍ [փրկված հոգիները] մեջ ուտելիք լինի [հոգևոր ուտելիք] և ապացուցեք ԻՆՁ այդպես, ասում է ՏԵՐԵՐԻ ՏԵՐԸ: Եթե չբացեմ Դրախտի պատուհանները ձեզ համար և օրհնություն չթափեմ ձեզ վրա, ուրեմն դուք վայր չեք ունենա դրանք ստանալու համար: Հանուն ձեզ կհանդիմանեմ փսաս հասցնողին, որ նա այլևս չավերի ձեր պտուղը, և ձեր այգու որթնատունկը անպտուղ չի լինի, ասում է ՏԵՐԵՐԻ ՏԵՐԸ: Բոլոր ազգերը երանի կտան ձեզ և դուք ցանկալի երկիր կդառնաք, ասում է ՏԵՐԵՐԻ ՏԵՐԸ» (Մաղաքիա 3:8-12):

---

**21** Սղ 51:5, Հռ 3:10-12, 23 **22** Մտ 26:63-64, 27:54, Ղկ 1:30-33, Յհ 9:35-37, Հռ 1:3-4 **23** Գրծ 4:12, 20:28, Հռ 3:25, Ա.Յհ 1:7, Յյտ 5:9 **24** Սղ 16:9-10, Մտ 28:5-7, Մրկ 16:9, 12, 14, Յհ 2:19, 21, 10:17-18, 11:25, Գրծ 2:24, 3:15, Հռ 8:11, Ա.Կրնթ 15:3-7 **25** Ղկ 22:69, Գրծ 2:25-36, Եբր 10:12-13 **26** Ա.Կր 3:16, Յյտ 3:20 **27** Եփ 2:13-22, Եբր 9:22, 13:12, 20-21, Ա.Յh. 1:7, Յյտ 1:5, 7:14 **28** Մտ 26:28, Գրծ 2:21, 4:12, Եփ 1:7, Կղ 1:14 **29**Մտ 21:22, Յհ 6:35, 37-40, Հռ 10:13 **30** Եբր 11:6 **31** Յհ 5:14, 8:11, Հռ 6:4, Ա.Կր 15:10, Յյտ 7:14, 22:14 **32** Մտ 28:18-20, Յհ 3:5, Գրծ 2:38, 19:3-5 **33** Բ.Օր 4:29, 13:4, 26:16, Ես 1:8, 22:5, Բ.Տմ 2:15, 3:14-17, Յկ 1:22-25, Յյտ 3:18

*Խնդրում ենք, կապվեք մեզ հետ հավելյալ տեղեկատվության և այլ հետաքրքրող թեմաների համար:*

**Tony Alamo, World Pastor, Tony Alamo Christian Ministries Worldwide • P.O. Box 2948, Hollywood, CA 90078**

**Քսանչորսժամյա հեռարձակում և տեղեկատվական թեժ գիծ: (661) 252-5686 • Fax (661) 252-4362**

**www.alamoministries.com • info@alamoministries.com**

*Թոնի Ալամո, Համաշխարհային Քահանա, Թոնի Ալամոյի Քրիստոնեական Առաքելությունը ԱՄՆում բնակվողների համար տրամադրում է բոլոր հարմարություններով կացարաններ, այն բոլորի համար, ովքեր իրենց ամբողջ սրտով, հոգով, մտքով և ուժով ուզում են ծառայել ԱՍՏԾՈՒՆ:*

**Նյու-Յորքում ծառայությունները անց են կցվում ամեն Երեքշաբթի ժամը 20:00-ին, իսկ այլ բնակավայրերում ամեն գիշեր:**

**ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԿԱՐՈՂ ԵՔ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ:**

**Խնդրում ենք զանգահարել (908) 937-5723 համարով տեղեկատվության համար:**

Կարող եք ստանալ Քահանա Ալամոյի գիրքը, Մեսիան, որտեղ ներկայացվում են 333 մարգարեություններ ՔՐԻՍՏՈՍԻ մասին, որոնք հայտնաբերվել են Հին Կտակարանում:

Տարածեք Քահանա Ալամոյի գրականությունը և դարձեք բանվոր հոգիների բերքի հավաքման գործում:

Մեր ողջ գրականությունը և աուդիոքարոզներն անվճար են, ներառյալ փոխադրումը:

Եթե որևէ մեկը փորձի ձեզնից վճար պահանջել դրանց համար, խնդրում ենք զանգահարել անվճար այս համարի հաշվին տվյալ հեռախոսահամարով (661) 252-5686

**ԱՅՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՓՐԿՈՒԹՅԱՆ ՃՇՄԱՐԻՏ ԾՐԱԳԻՐԸ (Գրծ 4:12):**

**ԴԵՆ ՄԻ ՆԵՏԵՔ ԱՅՆ ՓՈԽԱՐԵՆԸ՝ ՓՈԽԱՆՑԵՔ ՄԵԿ ՈՒՐԻՇԻՆ**

**Նրանք, ովքեր գտնվում են այլ երկրներում, մենք քաջալերում ենք թարգմանել այս գրականությունը ձեր մայրենի լեզվով:**

**Գրականությունը վերատպելու դեպքում, խնդրում ենք ներառել հետևյալ հեղինակային իրավունքը և գրանցումը:**

© Հեղ. Իրավունք. Ապրիլ 2013, 2015 Բոլոր իրավունքները պաշտպանված են Աշխարհի Քահանա Թոնի Ալամո,…Գրանցված է Ապրիլ 2013, 2015

ARMENIAN—VOLUME 17800—*THE DIFFERENCE BETWEEN SALVATION AND RELIGION*

Թարգմանված է. www.christian-translation.com